ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հուլիսի 2021 թ. N 48-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԳՆԵԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 885-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ ու 26-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից (այսուհետ՝ Համալիր) ավտոկայանատեղի գնելու ցանկություն ունեցող թվով 345 բնակարանի գնման իրավունք ձեռք բերած հավակնորդների կողմից ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2021 թվականի հուլիսի 19-ը:
3. Հաստատել, որ Համալիրի ավտոկայանատեղիների վիճակահանության գործընթացը կազմակերպվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի ապրիլի 26-ի N 36-Ա հրամանով հաստատված աշխատանքային խմբի կողմից:
4. Սահմանել, որ Համալիրի ավտոկայանատեղիների առցանց եղանակով իրականացվող վիճակահանությունն անցկացվելու է Կոմիտեում (Կառավարական տուն 3 շենքի 4-րդ հարկ) 2021 թվականի հուլիսի 21-ին՝ ժամը 10:00-ից մինչև 20:00-ն (մեկ ժամ ընդմիջումով): Վիճակահանությունն ըստ անհրաժեշտության կշարունակվի հաջորդող օրերին՝ մինչև կարգով սահմանված խաղարկության ավարտը:

5. Սույն հրամանի 3-րդ կետով հաստատված աշխատանքային խմբին՝ ապահովել վիճակահանության ուղիղ հեռարձակումը Կոմիտեի ֆեյսբուքյան պաշտոնական՝ https://www.facebook.com/qaghshin/ էջում և charagayt.am կայքում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Կոմիտեի կայքում պաշտոնական հրապարակման պահից:

Recoverable Signature

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050 Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ